ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնադրությամբ սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի (այսուհետ՝ Բաժնի) գործունեության իրավական հիմքերը:

1.2. Սույն կանոնադրությունը մշակված է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքների, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության, ԵՊՀ ԻՄ-ի (2016-2020թթ) զարգացման ռազմավարական ծրագրի ու ներքին կարգապահական կանոնների հիման վրա:

1.3. Բաժինը ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանում է, որը համաձայն իր կանոնադրության ունի իրավունքներ և պարտականություններ:

1.4. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով ԵՊՀ ԻՄ կանոնադրության 28-րդ կետի 8-րդ ենթակետի համապատասխան:

1.5. Բաժինն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրություններով, գիտական խորհրդի որոշումներով, տնօրենի հրամաններով ու սույն կանոնադրությամբ:

1.6. Բաժինը սույն կանոնադրությամբ սահմանված խնդիրները լուծելու նպատակով իր իրավասության սահմաններում համագործակցում է ԵՊՀ ԻՄ կառուցվածքային այլ ստորաբաժանումների հետ:

1.7. Բաժինն ունի ԵՊՀ ԻՄ խորհրդանիշով ձևաթուղթ:

2. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. **Բաժնի գործունեության նպատակն է** նպաստել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ նոր կրթական ծրագրերի ստեղծմանը, գործող կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներին՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան, կրթական ծրագրերի ապահովմանը անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական կազմով՝ պարբերական գնահատման և վերապատրաստումների միջոցով:

2.2. Բաժնի խնդիրներն են.

2.2.1. Աջակցել և վերահսկել մասնագիտության կրթական ծրագրերի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) քաղաքականության և ընթացակարգերի իրականացմանը:

2.2.2. Նպաստել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման, իրականացման և գնահատման աշխատանքներին:

2.2.3. Մշակել ԵՊՀ ԻՄ-ում գործող կրթական ծրագրերի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների քաղաքականություն:

2.2.4. Մշակել կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգեր:

2.2.5. Մշակել և իրականացնել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր, բարելավել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները:

2.2.6. Մշակել և իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն:

2.2.7. Մշակել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:

2.2.8. Մշակել և պարբերաբար կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրեր, կազմակերպել նրանց ներուժի զարգացումը:

2.2.9. Նպաստել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացների բարելավմանը:

2.2.10. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:

2.2.11. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:

2.2.12. Մշակել դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգեր, վերահսկել դրանց իրականացումը:

2.2.13. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

2.2.14. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ:

2.3. Բաժնի գործառույթներ են.

2.3.1. ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ համակարգել մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի ներդրման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման գործընթացները։

2.3.2. Կրթական ծրագրերի պատասխանատուների հետ համատեղ կազմակերպել և վերահսկել հետազոտական բաղադրիչի ներդրման, իրականացման և գնահատման գործընթացները մասնաճյուղի կրթական ծրագրերում։

2.3.3. Համակարգել Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի աշխատանքները՝ դասախոսական կազմի մանկավարժական կարողությունները և հմտություններն արդիականացնելու ու զարգացնելու նպատակով։

2.3.4. Համակարգել կրթական ծրագրերի պատասխանատուների աշխատանքը։

2.3.4. Համակարգել մենթորության ինստիտուտի աշխատանքները։

2.3.5. Վերհանել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի մասնագիտական և մեթոդական կարիքները, կազմակերպել մասնագիտական և մեթոդական օգնություն։

2.3.6. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան իրականացնել դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ։

2.3.7. Կազմել անհրաժեշտ վերապատրաստման թեմաներ։

2.3.8. Ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին։

2.3.9. Ստեղծել, համալրել, համակարգել և կատարելագործել դասընթացների և մասնակիցների վերաբերյալ տեղեկատվական բազան։

2.3.10. Մշակել և ներդնել մասնաճյուղի կրթական գործընթացների բարեփոխումների վերաբերյալ փաստաթղթեր՝ կարգեր, ուղեցույցներ, տեղեկագրքեր և այլ անհրաժեշտ նյութեր։

3.ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Բաժինն անմիջապես ենթարկվում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենին:

3.2. Բաժնի աշխատանքները ղեկավարում Բաժնի վարիչը, ում աշխատանքի ընդունում ազատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը:

3.3. Բաժնի վարիչը՝

3.3.1. պլանավորում, կազմակերպում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Բաժնի ընթացիկ գործունեությունը:

3.3.2.ապահովում է Բաժնի հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը, լուծում է դրանից բխող հիմնախնդիրները:

3.3.3. Բաժնի աշխատակիցներին իր լիազորության սահմաններում տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, որոնք նրանց կողմից ենթակա են պարտադիր կատարման,

3.3.4. կատարում է աշխատանքի բաժանում Բաժնի աշխատողների միջև,

3.3.5. ստորագրում է Բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը, առանձին դեպքերում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր,

3.3.6. մասնակցում է տնօրենի կողմից հրավիրված նիստերին և խորհրդակցություններին,

3.3.7. առաջարկություններ է ներկայացնում ԵՊՀ ԻՄ տնօրենին Բաժնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ

3.3.8. իրականացում է ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, տնօրենի հրամաններով, այլ իրավական ակտերով և պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ:

3.3.9 պատասխանատվություն է կրում Բաժնի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Բաժնի առջև դրված խնդիրների հնարավորինս պատշաճ և արդյունավետ լուծման համար:

3.4. Բաժնի կազմում ներառված են ԵՊՀ ԻՄ-ի հաստիքացուցակով նախատեսված մասնագետները:

3.5. Բաժնի աշխատողների աշխատանքային պարտականությունները սահմանվում են աշխատանքային պայմանագրով, պաշտոնի անձնագրով՝ աշխատանքի նկարագրով, ԵՊՀ ԻՄ կոլեկտիվ պայմանագրով, ԵՊՀ ԻՄ ներքին իրավական այլ ակտերով:

4. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն կանոնադրությունը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը:

4.2. Կանոնադրությունում փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ՝

4.2.1. Տնօրենի

4.2.2. գիտական խորհրդի անդամների,

4.2.3. Բաժնի վարիչի առաջարկությամբ: